

ՏԱՍՆ ԵՒ ԵՌԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան ցուցահանդէսի բացումը.— Ներքին
Տեսչութիւնը. Ա. Կովկասեան ցուցահանդէսի
Նախակ շին-Ջուղայից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանական կառավարու-
թիւնը և վատիկանը. Արտարին լուրեր.— ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ.— Հեռագրութիւն.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գարդամաշ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՏՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՅՈՒՄԸ

Երէկ, սեպտեմբերի 15-ին տեղի ունե-
ցաւ Կովկասեան ցուցահանդէսի հանդիսա-
ւոր բացումը. Ժամը 10-ին առաւօտեան
արդէն հաւաքված էր ցուցահանդէսի
մուտքի առջև հրաւիրածների մեծ բազ-
մութիւն, որոնց թուումը բացի վիճակաւ-
կան և քաղաքացիական բարձրաստիճան
անձերից, կային հասարակութեան ամեն
դասակարգերի ներկայացուցիչները և նոյն-
պէս տեղական մամուլի ներկայացուցիչները:
Իրական սեռը՝ մուտք չստանալու բացման
հանդէսին և ներկայ էին միայն մի քանի
տիկիներ, որոնք կամ էկզզանանք էին,
կամ կարգադրիչներ:

Ամենքը սպասում էին Մեծ Իշխան Մի-
խայիլ Նիկոլաւիչի գալու, որը ցուցա-
հանդէսի հովանաւոր է:

Մեծ Իշխանի գալու պէս ուսու հոգե-
ւորականութիւնը սկսեց մաղթանքներ կա-
տարել: Մեծ Իշխանին հետեւում էին թէ
կովկասեան կառավարչապետ Իշխանը, և թէ
նմանապէս այն մի քանի անձինք, որոնք
փոխարքայութեան ժամանակ ամենաբարձր
պաշտօններ ունէին ներկայումս.— Իշխան Մի-
սկի, բարձր Նիկոլայի, Իշխան Մէլիքով
և այլն:

Մաղթանքներից յետոյ սրբազան Պալա-
ղի մի կարճ ճառ ասեց և ապա Մեծ Իշ-
խանը բարձրաստիճան անձինքներից և էկզ-
զանքներից ուղեկցված՝ սկսեց այցելել
ցուցահանդէսի զանազան մասերը: Այդ ժա-
մանակ սկսեց անել զինուորական երաժշ-
տութիւնը:

Ցուցահանդէսը, ընդհանրապէս, իր ար-
տաքին տեսքով, իր սարք ու կարգով շատ

լաւ տպաւորութիւն է անուամ Մեծ Իշ-
խանի մանրամասնաբար ուսումնասիրել ցու-
ցահանդէսի իւրաքանչիւր մասերը, որ
անհնարին էր անել բացման հանդէսի ժա-
մանակ:

Մեծ Իշխանը ամբողջ ցուցահանդէսն
այցելելուց յետոյ յայտնեց ցուցահանդէսը
բացված և ուղեւորվեց դէպի պալատը, որ-
տեղ Իշխան կառավարչապետի կարգադրու-
թեամբ նախակաշիկ էր պատրաստված Նո-
րին Բարձրութեան համար:

Մեծ Իշխանի գնալուց յետոյ հետզհետեւ
սկսեցին ջրվել և հրաւիրվածները Նոյն
օրվայ ժամը 1-ից սկսած ցուցահանդէսը
արդէն բացված էր համարվում և ամբողջ
հասարակութեան համար:

Ցուցահանդէսի բացվելուց յետոյ երեք
օր շարունակ, այսինքն 15-ին, 16-ին և
17-ին սեպտեմբերի, նմանապէս ամեն եր-
կուշաբթի օրերը մուտքը 1 ռուբլի կար-
ժինայ:

Ողջունում ենք և մեր կողմից կովկա-
սեան անդրանիկ ցուցահանդէսի բացումը
և աջողութիւն ենք ցանկանում այդ ձեռ-
նարկութեան:

Մենք կաշխատենք հետզհետեւ տեղեկու-
թիւններ տալ մեր ընթերցողներին ցուցա-
հանդէսի մասին և կը զետեղենք այդ տե-
ղեկութիւնները «Կովկասեան ցուցահան-
դէս» վերնագրով մեր լրագրի ներքին տե-
սութեան բաժնում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԱՆԿԵԶՈՒՐՈՒՄ

Ոչ մի տեղ գտեց այնքան եղիւնադործութիւն-
ներ չեն կատարվում, որքան ներկայ ժամանակ
Սիւրիանում, Զանգեզուրի պոլիտիկական առաջին
բաժնում: Արդէն յայտնի է, որ այս տարվայ
ապրիլին Շուշու բանտից փախել են երկու
հոգի բանտարկվածներ. դրանք Զաքարի գաւա-
ռի ֆարմ-բէկը և լիւպիլիցն էին. ինչպէս երե-
ւում է այդ փախստականները այդ տեղից եկել

հետ, այս մեղադրանք անշարժութեան, այս տը-
խուր ջաղաքի հետ, որ կարծես չէ կարողանում
զիմանալ մշուշի խոնաւ ու ծանր մարմնի տակ
և ողբում է կաթ-կաթ ծորացող, ծանր արտա-
ստեղծութիւն: Մի երկարակամի տուն, որ տեղա-
ւորվել է մեծ փողոցի հեռաւոր ծայրում, և նա-
յում է այդ կեղտոտ փողոցին իր երկու լուսա-
ւոր աչքերով.— երկու քառակուսի պատուհաննե-
րով, հարսանիքի, ուրախութեան տուն չէ: Այդ-
տեղից են դուրս գալիս՝ այդ անժամանակ, ոչ ո-
քի չը սիրած պարի ձայները, որոնք ներսում են
մանաւանդ կանանց, այսինքն նրանց, որոնք պա-
րերի անկուշտ սիրահարներն են: Լսելով պարի
եղանակը, հարեան կինը աչքերը դէպի երկինք է
բարձրացնում և հառաչելով խնդրեցնում է անուամ.
Աստուած, Դու հուռու տուննս մեղանից: Պարի
տունը զննողը չը կայ. ամենքը վախում են, ա-
մենքը վկայում են, որ այդ պարը տեսնելու
սիրտ չունենա Բայց էլի գտնվում են կանայք, ո-
րոնք շատ անգամ ուրիշ թաղերից գալով, ա-
ռանց հրաւերի մտնում են այդ տունը, կանո-
ւում, նայում Միայն կարեկցութիւնը չէ, որ
այդ սակաւաթիւ այցելուներին բերում է այդ-
տեղ. դրանցից շատերն ունեն իրանց վիշտը, ո-
րը շարժելու, ողբալու համար հարկաւոր է այդ-
պիսի մի տեղ, այդպիսի մի սպասուում:

Սգաւորն է, ուր, սակայն, մեռեալ չը կայ:
Լաց են լինում պարի եղանակի հետ: Ո՛ր է
այդ ընդհանուր վհատութեան, թմբուկի ձայնով
հռչակուած այդ վշտի պատճառը:

Ահա վեր կացրին նրան, ճրագը հեռացրին,
զրին անկիւնում: Ոտի է կանգնել մի սարսափ-

են իրանց Թները, որտեղ մի առ ժամանակ ծա-
ծուկ մնալուց յետոյ, ամառվայ սկզբներում ի-
րանց ընտանիքների հետ բարձրացել են Զանգե-
զուր գաւառի Սիւրիանի շէնայանները և ամբողջ
ամառ անվրդով կերպով բնակվել են այդտեղ ի-
րանց ընտանիքների և ազգականների մօտ: Իսկ
երբ փախստականների ընտանիքները վերադար-
ձան Զաքարի գաւառի իրանց բնակութեան առ-
դը, դրանք կազմելով ուրիշների հետ աւազակա-
յին խումբ, սկսեցին այն տեսակ չարագործու-
թիւններ անել, որպիսին այստեղ երբէք չէ եղել,
ինչպէս ասում են ծերերը: Այդ խումբը, որ ցե-
րեկով գալիս է որ և իցէ հայ գիւղ, մի յայտնի
գումար փող է պահանջում, վրաւորները առանց
մի փոքր անգամ դիմադրելու, իսկոյն կատարում են
աւազակների պահանջը. ինչ անեն, վախենում են
մի քանի մանկիկի համար դժուար կ'աւանդ լինել:
Ղալաջը գիւղից (Երկրորդ Ղալաբէկիսա) աւա-
զակները ստացել են 50 ռուբլի և մի մարդ են
վերադարձրել: Մտաւոր ստացել են 210 ռուբլի,
և այնու Տօրոս գիւղացի մէկին զննակով
վերադարձրել են, այդտեղից փող ստանալով չէ ա-
յողվել, բարեբաղդաբար սպանութեան դէպքը
առ այժմ մէկն է եղել: Անցնելով Շաղառ գիւղի
մօտով, աւազակները զննակահար են արել մի
բանջարանոցի պահապանին ու խեղճին տեղն ու-
տեղը թողել են: Այդ ամենը դուք քիչ է. աւա-
զակների յանդուգնութիւնը հասնում է այն առ-
տիճանի, որ դաշտից մարդկանց բռնելով տա-
նում են, իրանց մօտ պահում, ինչպէս գերի, և
չեն ազատում, մինչև որ դրա համար փրկանք
չեն ստանում: Այդպէս օրերումս Մաղառ հայ
գիւղի գաշտից երկու երկուսսարդ բռնելով, տա-
րել էին իրանց մօտ, երկու օր պահել և 150
ռուբլի փրկանք ստանալով, բաց էին թողել: Ե-
րկուսսարդներից մէկը եղել է հորուստ մի գիւ-
ղացու որդի, իսկ միւսը նրա եղբոր որդին:
Ասում են թէ անդակաւ ընակիչներից կան մար-
դիկ, որոնք ծածուկ կերպով աւազակներից պաշտ-
պանում են, մանաւանդ թուրք աղաքանիքների
նրա Ժողովուրդը մեծ սարսափի մէջ է. ամեն մի
բոլակ, ցրեկ և գիւղեր, գիւղացիները ահ ու դո-
ղով սպասում են աւազակների յարձակմանը ի-
րանց գիւղերի վրա: Թէպէտ դաւառապետի կող-

լի արարած, մի մարդ, որ մահուան պատկեր է:
Գոյն չը կայ դէմքի վրա, կաշին կպել է ոսկոր-
ներին, ձգվել է և պսպղում է լոյսի առաջ: Նա
տարածում է իր բարակ ու ոսկրացած ձեռքերը,
միմեկից վրա ծալած տափակ շրթունքները հա-
զիւ նկատելի կերպով բարձրացնում են, գլուխը
դէպի մի կողմ թեքում և այդպիսով արտայայ-
տում է մի անկարող թուլութիւն, մի կսկիծ, որ
անուշ չունի: Աչքերի մէջ կենդանութեան նշույլ
չէ մնացել, այդ աչքերը նման են ապակեայ
զննակների, որոնք խոր ընկած են դուրս ցցուած
ոսկորների մէջ և կիսով չափ ծածկված են ու-
ռած ու սևացած կաշով: Եւ մի այդպիսի մարդը
պարում է....

Պարում է մի անմիտ, անշնորհ պար, որ սովոր-
ական ժամանակ ծիծաղ կը պատճառէր, իսկ
այժմ զրգուած է մարդու արտասուքը միայն Ա-
նունով է այդ պարը պար ասվում. իսկապէս
նրա մէջ պարի յատկութիւն չը կայ. ոչ ճարտար
ու թեթիւ շարժումներ, ոչ գեղեցկութիւն, ոչ մի
վայելչութիւն պատճառող եւանդ, որ բոլոր ան-
գամներին տալիս է պատշաճաւոր դրութիւն,
խաղացնել է տալիս այս ու այն կերպ: Եւանդ
կայ և այս կիսամեռ կաղնուածքի մէջ. բայց մի-
այն շարժելու, կտորատվելու եւանդ, ցանկու-
թիւն իր մարմնի շարժարկով, փշրելու, յոգնե-
լու: Նա դէս ու դէն է ցցում իրանք, կուրծքը,
թեքը, գլուխը Նուազ են, թոյլ ու անկարող
են այդ շարժողութիւնները, նա մնալ կանգնել
չէ կարողանում, նրան բռնած են պահում. բայց
նրա ամբողջ կաղնուածքը վկայում է միայն այն,
որ նա երկար, շատ երկար է ուղում այդ շար-

մից սաստիկ հրաման է տված այստեղի պոլի-
ցիական պրիստաւին աւազակները ցրվելու,
բայց գործողաբար դեռ ևս դա չէ աշուղ նը-
րան... Պէտք է ասած, որ դրա մէջ մեղա-
ւորը տեղական բնակիչներն են, որոնք իր ժա-
մանակին ցոյց չեն տալիս աւազակների տեղը,
կամ իրանց կարողութեան չափ. չեն օգնում պո-
լիցիային դրանց ձերբակալելու: Գաւառապետը
մի քանի օր սրանից առաջ իրաւունք տուեց
հայ գիւղացիներին ունենալ «երկանկա» կոչ-
ված հրացանները: Ուղ և Տօրոս գիւղացիներից
շատերը արդէն զինել են իրանց համար այդ
տեսակ հրացաններից: Ցանկալի է որ ուրիշ գիւ-
ղերի բնակիչներն էլ օրինակ վեր առնեն դրան-
ցից և այդպէս իրանց զուգը պաշտպանեն:

Ի—ցի

ՆԱՄՍԱՀ ՀԻՆ-ՋՈՒՂԱՅԻՑ

Սեպտեմբերի 2-ին

Թէև մի փոքր ուշ, բայց և այնպէս աւելորդ
չենք համարում հաղորդել հետևեալ մանրամաս-
նութիւնները պարսից Շահի այստեղ գալու մա-
սին:

Իրէկ երեկոյեան պահուհի հասաւ այստեղ պար-
սից Շահը: Իրանի միապետի գալուտեան պատ-
ճառով, ահագին բազմութիւն թուրք և հայ ազ-
գաբնակութեան 2—3 օր առաջ եկել էին Զու-
ղաւ կարանիքի բոլոր տները լի էին մարդկան-
ցով. բացի դրանից շատերը վրաններ էին դար-
կել, կամ տեղափոխվել էին բաց երկնքի տակ:
Իսկ պարսից սահմանում, գրեթէ կիսով վերստ
տարածութեան վրա, Երասխ գետի ափով, պար-
սիկները զարկել էին իրանց վրանները: Զենք
սխալվի մենք, եթէ ասենք որ 6 հազար, դու-
ցէ և աւելի, պարսիկներ եկել էին Շահին
գլխավորելու: Ռուսաց սահմանից՝ Երասխի ձա-
խակողմեան ափից նայելով, մարդու առաջ
ներկայանում էր մի ամբողջ բանակ: Հետաքրքիր
էր տեսնել, որքան ջերմ ցանկանում էին երկու
կողմերն էլ փոխադարձաբար անցնել սահմա-
նը. պարսիկ զինուորները և ստոր դասակար-
գը. խնդրում էին իւրաքանչիւրից թոյլաւո-
թիւն անցնել սահմանը և ոտը դնել ուսաց հո-

ժողովութիւնները շարունակել: Նա երբեմն հառա-
չում է, բարակ, գերեզմանական ձայնով կարճ
աղաղակներ է հանցում կրծքից: Այդ նշան է, որ
նա ծանրանում է, սկսում է նեղանալ. նուազա-
ծուները ոտ ու գլուխ շարժելով փնտր են եւա-
փում, որ պարի եղանակը որքան կարելի է շատ
դուր գայ նրան և նա դեռ շարունակէ այդպէս
չարչարել իրան: Բայց կարճ է ուժաթիւնի ան-
դամների գործունէութիւնը, որքան և շատ լինի
նրանց շարժելու: Ներքին ցանկութիւնը. նա յոգ-
նում է: Իսկայն նստեցնում են և հիմա էլ նըս-
տած պիտի պար անել: Իսկ երբ նստած էլ յոգ-
նում է և չնչապառ տարածվում է գետնի վրա,
այն ժամանակ մօտ է գալիս մի ուժեղ երիտա-
սարդ գիւղացի, որին վարձել են պար անելու
համար: Երիտասարդը սաստիկ ոյժով դէս ու դէն
է շարժում նրա ձեռքերը, գլուխը, ոտները, շար-
ժում է, ձգձգում է մինչև անգամ քիթը, ակնաջ-
ները: Այդ գործողութիւնը նա երկայն է շարու-
նակում. նուազողները յոգնել են, ջրտնքի մէջ
մտել, իսկ երիտասարդի դէմքից առատ ծլում է
բրտիքը. հիւանդի ստուած ու կիսամեռ անդամ-
ները շարժելուց նա տաքացել է, կրակ ընկել,
նրա չնչառութիւնը ընդհատվում է: Բայց հիւան-
դը չէ բողբոջում, չէ ձանձրանում, ընդհակառա-
կըն, հանում է այնպիսի կոկոնակ, անորոշ ձայ-
ներ, որոնցով պիտի խրախուսվի պար անողը:
Երբեմն այդ կոկոնակ ձայները փոխվում են, ո-
րոշակի դառնում, նա սուգ է կանչում. և այդ
ժամանակ լաց են լինում բոլոր տանիքը, քա-
մանայի ձայների հետ խառնվում է սգի անընդ-
հատ ձայնը: Բայց ահա, վերջապէս, նեղանում է

դի վրա, որ գնան իրանց հայրենիքում պատմեն, որ եղել են ռուսաց երկրում: Բուսաց և պարսից նաւակները անդադար երթևեկութեան մէջ էին. ում թող չէին տալիս պարսիկ անցանկը, նա անցնում էր ձիով կամ ոտով: Մարդկանց բազմութեան պատճառով ոչ մէկ կողմի դիմադրութիւն չէին կարողանում վերականգնել: Ուրբաթ ռուսաց զորականները եկել էր մեզ մօտ և ներկայ էր կողակների զորահանգիստին: Մենք ևս առիթ ունեցանք երկու անգամ սահմանը անցնելու. առաջին անգամն էր, որ մենք տեսանք պարսկական դիմադրութիւն, ձիաւորներին, սպաներին և զենքերայիններին իրանց համազգացներով: Տեսանք նոյնպէս և վախժաններին, նահանգապետներին, խաներին և բէգերին: Վրասները ամենաաչքի ընկնողը Շահին և վախժաններին (թագաւորանի) վրաններն էին իրանց գեղեցկութեամբ, ճոխութեամբ և ընդարձակութեամբ: Բայց զլիսաւորապէս զարմացրին մեզ պարսիկները և քրտի դիմադրականները: Դիմադրութեամբ, և զենքակրթեամբ: Բարձրաստիճան անձանք ձիերը փայլում էին օսկով, արծաթով, սանձերը քահուրարով, թամբերը թանկագին գործածներով ծածկված: Շահին գալստեան օրը եղանակը մի քանի անգամ փոխվեց. ռուսաց լաւ էր, իսկ կիսօրից յետոյ երկինքը պատեցաւ ամպերով, փոքր ինչ անձրևեց: Ժամի 4-ին բարձրացաւ սաստիկ քամի և փոշի: Շահը հառաւ ձյառեղ ժամի 5-ին և ուղղակի միայնակ զնաց մաքսատան սենեակները. նրան իսկոյն հետեցին պարսից մինիստրները: Մաքսատան սենեակները և հրապարակը լցված էին բարձրաստիճան դիմադրականներով, ռուս ծառայողներով: Մաքսատան դռնից մինչև սենեակները 3 շարք կանգնած էին կազակները: Եկել էր Ջուղա նոյնպէս և Պարսկաստանի ռուսաց հիւպատոսը: Շահին համար պատրաստված էր փառաւոր ճաշ. սակայն նա չը մնաց ճաշին և 5 րոպէի չափ Ջուղայում մնալուց յետոյ իր մինիստրներով նաւակ նստեց և անցաւ իր սահմանը: Մաքսատանից մինչև գետափը փռած էին զորքեր, թէ ռուսական և թէ պարսկական նաւակները զարդարված էին դրօշակներով: Պարսիկների ռաւախական աղաղակները թնդում էր օդը: Միւս ափում դիմադրեցին միապետին վախժանը և աստիճանաւորները: Սկսեց թնթափած զուլում, որը տեսնելը զրեթէ կէս ժամ Չինուոր երաժիշտները երկար ժամանակ անուր էին պարսկական և եւրոպական ուրախ եղանակները: Շահը ձիով գնաց մինչև իր վրանը. ապա մի ժամից յետոյ փոքր ինչ ամեն բան հանդարտեց: Մութը վրա հասաւ թէ չէ, կրկին սկսեց թնդանութեամբ լինել և մի ժամու չափ տեսնել արեւելեան հրախաղովիւնը: Ժամի 10-ին մօտաւորապէս հրախաղովիւնը եղաւ և մեզ մօտ: Գիւտ երկար ըսվում էին այն կողմից երաժշտութիւն և ամբողջ

ուրախ գոռում գոչումները: Այսօր ռուսաց զորականները փոքր ձիաւորաւ կատարեց և «մարշ» անելուց յետոյ, հաւաքեցին իրանց վրանները և չուեցին: Կարանտինն էլ այսօր զբոսվեց իր կենդանութիւնից. ամենքը ցրուեցան: Հին Ջուղայում կրկին տիրեց մեռելային լուրջութիւնը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Daily News» լրագրի թղթակիցը Կ. Պոլսից հեռագրում է, որ Մուսա-պէյ պատուաւոր հիւրի պէս ընդունելութիւն է գտնում թիւթագ մայրաքաղաքում, իսկ նրա դէմ դատ վարելու համար Արմենիայից եկածները օստիկանութեան խիստ հակադրութեան տակ են գտնվում: Մէ և նոյն թղթակիցը հեռագրում է, որ Մուսա-պէյի եղբայրը, քրտի աւազակների զուլան անցած, յարձակվել է Մուշի գաւառի վարդապետի հայաբնակ գիւղի վրա, բայց զիւրազանքը կատարել չէր հաջողութեամբ փախցրին քրտերին:

Անգլիական «Standard» լրագրին հեռագրում են թէ Մուսա-պէյ սպառնում է, որ եթէ իրան որ և է պատժի ենթարկեն, նա երևան կը հանէ այն նամակները, որ քանի մի թիւրք նահանգապետներ զրաժ են եղել իրան, խորհուրդ տալով որ աւազակութիւններ անէ և իրանց էլ քաժին հանէ իր կողպատածից:

«Արեւել» լրագրի մէջ կարդում ենք հետեւեւորը: «Եկեղեցական վարժարանի խնամակալութիւնն երէկ, օգոստոսի 30-ի նիստ գումարեցաւ ի խորհրդարան Ղալաթիոյ, ընդ նախագահութեամբ Պատրիարք Հօր և ներկայութեամբ բոլոր անդամաց: Խնամակալութիւնն ի նկատ առաւ աշակերտացուց ընդունելութեան խնդրագրերն և որոշեց յառաջիկայ երկուշաբթի առաւօտ քննութիւն կատարել յարմարաւորները ընտրելու: Վարժարանի բացման հանձնը պիտի կատարուի Ս. Խաչի տօնին Արմաշու վանքին մէջ, ներկայութեամբ խնամակալութեան անդամաց: Օրմանեան Սրբազան վարժարանի տեսչութեան հետ պիտի վարէ ևս Արմաշու վանահայրութեան պաշտօնն իբր փոխանորդ Պատրիարք Հօր Ն. Գերապատուութիւն ի մօտոյ պիտի մեկնի յԱրմաշու ուխտագնացութեան ժամանակին այդտեղ գտնուելու համար: Խնամակալութիւնն ուրիշ կարեւոր որոշումներ ալ տուաւ վանական մատակարարութեան, եկեղեցական վարժարանի ուսուցչաց, աշակերտներու զգեստուց, վարժարանի կարասեաց և ուրիշ պիտոյից վրայ:»

«Արեւել» լրագրում կարդում ենք. «Կիւսական Ժողովն ի նիստ գումարեցաւ երէկ ի Պատրիարքարան ընդ նախագահութեամբ Պատրիարք Հօր և ատենակալութեամբ: Խորհն արեւելակողմային

Ժողովն երկար խորհրդակցութիւն մը ունեցաւ ամուսնական ինչ ինչ կարեւոր և հարկեցուցիչ խնդրոց վրայ, որոց լուծման համար որոշեց Ամենայն Հայոց Հայրապետին ղեկել տալ Նիկիոյ ցական Համագումար Ժողովն ի նիստ հրաւիրել սկսածներին 13-ին, չորեքշաբթի օրը:»

Մեզ գրում են Բել-Լի-Լի-Պէ, որ տիկին Նուշէ Շահնշեան, որը կառուցել է Բել-Լի-Պէում մասամբ իր փողով, մասամբ հանգանակութեամբ մի հայոց եկեղեցի, այժմ աւարտել է և հայոց երկուս ծխական-եկեղեցական դպրոցի շինութեան կառուցումը: Շինութիւնը երեք յարկանի է և ստորին յարկում պէտք է լինի արհեստանոցը, քանի որ տիկին զիտաւորութիւնն է մօցնել դպրոցի մէջ արհեստների աւանդելու: Ցանկալի է, որ հայ հասարակութիւնը նիւթապէս օգնէր տիկին Շահնշեանի բարի գործին, քանի որ ոչ թէ միայն Բել-Լի-Պէում, բայց և շրջակայ հայ գիւղերում մինչև այժմ ոչ մի հայոց դպրոց չը կայ: Ցանկալի է որ հայ հասարակութիւնը միջոց տար յիշեալ ուսումնարանին, որը շրջակայ բազմաթիւ հայ գիւղերի համար կենտրոնական ուսումնարան կարող էր լինել, վարձել մի ուսուցիչ և մի վարժուհի: Իսկ Բել-Լի-Պէ, որն ունի 40-ի չափ հայ տուն, շրջապատված է հետեւեւոր հայաբնակ գիւղերով՝ Վարսուն գիւղը (40 տուն), Սամշլիլի (100 տուն), Գաղթի (200 տուն), Սամշլիլի (30 տուն) և այլն: Եւ այդ ընդարձակ հայ ագլոմացիան մէջ ոչ մի հայոց ուսումնարան չը կայ:

Քանի անգամ խնդրել ենք, որ այն անձինք, որոնք մեր լրագրի խմբագրի անունով, կամ փաստաբան պ. Սենեքերիմ Արծրունու անունով հեռագրի են ուղարկում, երբեք չը գրեն հեռագրի վրա միմիայն Արծրունի աղագումունը, այլ միշտ որոշեն թէ Ժր Արծրունուն են հեռագրում: Փաստաբան Արծրունուն, թէ խմբագիր Արծրունուն: Խնդրում ենք հեռագրել միշտ այսպէս. Редактору Арцруни, Кому Адвокату Арцруни. Եթէ ոչ, հեռագրատունը երբեք չը գրիտ թէ ում պէտք է հասցնել հեռագրերը:

Ուսուցիչ պ. Մուրադեան ինչպիսիք է մեզ յայտնել, որ Արեւելիայի հայ դպրակալները Մծարա գիւղի հայոց ուսումնարանը հետեւեւոր պայմաններն է առաջարկում ուսումնարանի ուսուցչին, ամբիւրան 400 րուբլի, երկու անհետկից բաղկացած առանձին բնակարան, վառելիք և մինչև անգամ անունը Պ. Մուրադեան մի և նոյն ժամանակ մեծ գովաւանքով է խօսում Մծարայի հայ երկրաւորութեան քահայ Մկրտիչ Միսախանյանի մասին, որի նման աշխիւ մարդ, պարտիկ ասելով, շատ քիչ կը գտնվի հայ քահանաների մէջ:

Ձմիւռնայից մեզ գրում են. «Ամիս մը կայ,

պէս էր, որ նա դողում էր իրանից մեծելը, պինդ ծածկում էր երեսը, տանիքը ու զոնից հեռանալ չէր համարձակվում: Արեւելում պատուը քաղցը և եղել նոյն իսկ նրա նախամօր համար. չար սատանան երբեմն խառում էր նրան, դուրս էր բերում սահմանած դիրքից: Ամենը զայն թակահարութիւն էր, բայց մայրը անմիջական չէր կշռում, «սասնը չանել» — այդ բաւական էր նրան դատելու, պատժելու համար: Պատիժը ծածկ չէր. «ծածկ էլին կը տան», ասում էր նա և պատժում էր իր աղջկան ծածկ տալու անհամարձակութեամբ: Իսկ խօսքերը, շատ անգամ ամենանամով հայոցանքներ էր թափում՝ նայած թէ որ աստիճան էր բարձր ված նրա սիրտը:

— Զողի բաժին, գոչում էր նա ամեն անգամ. — դարձաւ դու չես, դու կարգիս ինչպէս որ լինի, այնպէս եղիլ, որ քիչ տանող մի անգամ դուն ինձ ողորմի տայ, խեղճ հոգիս հանգիստ թողնէ, ամեն օր փոքր ուղիւրս չը հանէ գերեզմանից ու յիշոց տայ...»

Միշտ մեզ էր լուում Սալբին, ուշ էր հանդարտվում, անհանում աղջկայ այն արարքը, որի համար այդպիսի խօսքեր էր ասում: Ասում էր աղջկայ ճակատին, աչքը գցած նրա աչքին, ուրիշ կերպ չէր թողնում որ նա լսէ իսկ նա ստիճարած էր, նրա ճակատի կային, ինչպէս ինքն էր ասում, հաստացել էր. և լուռ ու մուռ հագալից մի անգամ, յանդիմանութիւնը խեղդելու չափ անտանելի դարձած ժամանակ, աչքերից մի երկու կաթիլ կաթեցնելով լուռ էր մօր խրատները: Եւ մինչև 13 տարեկան դառնալը նա սո-

ր քաղաքիս մէջ ճարակված է տարափոխիկ հիւանդութիւն մը, որը Հնդկաստանէն հաս փոխադրված կը կարծի, որտեղ «deng» անուամբ ճանաչված է: Սոյն հիւանդութիւնը նախ սկսաւ Ձմիւռնայի հրէից և թրքաց թաղերէն (որտեղից ընդհանրապէս կը սկսի ամեն հիւանդութիւն) և հետզհետէ տարածվեց ամբողջ քաղաքի մէջ: Այժմ չը կայ տուն, որի մէջ մի քանի հոգի վարակված չը լինեն այս հիւանդութիւնէ: Բայց գոհութեամբ պէտք է ասել, որ մահ չը պատճառեց, եթէ ոչ, հազարաւոր զոհ պիտի ունենային:

Թաւրիղից արտասահման հայոց մի լրագրին գրում են հետեւեւորը. «Ապրիլի 8—20-ին լոյս տեսաւ տեղաւոր նորահաստատ տպարանում (Բուստարապրոթիւն հռչակաւոր վանուց Սրբոյն Գէորգայ, որ ի Մուշի վերադառնալով զբոսիլը, բաղկացած 40 երեսից, հեղինակութեամբ Ատրպատականի առաջնորդ սրբազան Միսիթարեանցի իսկ այժմ ևս մամուլի տակ է և մի ամսից յետոյ լոյս կը տեսնի «Հոգի և Մարմին» վերահրդով գիրքը, հեղինակութեամբ անգլիացի Ալեքսանդր Բէն. բնագիրը վեցերորդ տպագրութիւնից թարգմանված է ռուսերէնի և ռուսերէնից սրբազան Միսիթարեանց թարգմանել է հայերէնի: Թաւրիղի յօդուարից ձեռնարկելու են նաև մի շարքավորութիւն հրատարակութեան: Թէ ինչ կը լինի այդ ապագայ շարքավորութիւնը, — այդ յետոյ կը տեսնենք, եթէ միայն Թաւրիղը բազմ կուսնեայ մի շարքավորութիւն ունենալու: Սակայն չենք կարող չը յայտնել մեր զարմանքը, որ Պարսկաստանի Թաւրիղ քաղաքում զանազան դժուարութիւններով հիմնած տպարանում ուրիշ բան չեն գտնում տպագրելու համար, բացի դահազան վանքերի նկարագրութիւններից և դրա նման ապարդիւն գրութեանից...»

Կ. Պոլսում մի քանի անգամ դադարեցուց և ընդհատվեց յետոյ, կրկին անգամ սկսեց լոյս տեսնել «Մասին» շարքավորութիւնը, որի գլխաւոր ղեկավարն այժմ էլ պ. Արթուր Արթուրեանն է: «Մասին», ինչպէս վերին տարիներում, այնպէս և այժմ, իրան նպատակ է դրել զբաղվել իշխաւորապէս այն հասարակական խնդիրներով որոնք թիւթագային և Կ. Պոլսի կեանքի մէջ հերթական բնաւորութիւն ունեն: Առաջին համարի մէջ երկու յօդուած, որոնցից մէկը վերահրդով է «Աղջկայն տեսութիւն», իսկ միւսը, որ կրում է «Վէճ» վերնագիրը և վերաբերում է ռուսահայ գրականութեան մի ճիւղին և մասնաւորապէս մեր երկրաւոր գրող պ. Լեւոն, պատկանում են պ. Արթուրեանի գրչին: Այդ նոյն համարում գետեղված են «Ղալաթիոյ թիւթագ» գրութեանը: Բաշխան ստորագրութեամբ և մի ուրիշ յօդուած պաշտօնական կեանքից, Հրատ ստորագրութեամբ: Մենք հաւատացած

հիւանդը, նրա վրա էլ երևում է մի տաք քրտի, նա ձգվում է գէպի իր անկողինը: Պարածող գիւղացին դնում է անկողնում և այժմ իր ուսեղ ձեռքերով ուրիշ գործ ունի կատարելու: Զուլում, Զուլում է հիւանդը ամբողջ մէջքը, ուսեղը, կուրծքը, այնքան այդպէս է անում, մինչև որ իր կոնքին են նեղանում, թուլանում: Հիւանդը հանդարտվում է, այսինքն դիակի պէս անշարժանում: Դուրսդուրները, պարածողը, ամենքը քիչ չուշ են քաշում, հանգիստ առնում: Բայց ոչ երկայն ժամանակ: Շուտով էլ բոլորը պատրաստ պիտի լինեն հիւանդի այդ սարսափիկ կամքը կատարելու: Տարօրինակ կամք: Այդ հիւանդը բոլորովին մոռացել է իրան, մոռացել է որ ինքը մի կին է, այն էլ մի ջահիլ կին և այդպիսի երեսաբացութեամբ այդքան մարդկանց մէջ իր մարմինը բացարձակ այդ կերպ խաղայնել է տալիս...

Բ.

Նրան անուանում էին զորադամաճ դառնած: Դարդը, անբուժելի վիրքը մահացրել էր նրա գոյութեան մեծ մասը և այժմ այդ գոյութեան մի ողորմելի մնացորդը, գերեզմանական ստուռը մի բան էր միայն պահանջում մեր մեծ ու լոյս աշխարհից, այն է՝ պար գալ: Զուլանայի, քամանչայի և փողի ձայններով էր պար ածում զարդը, որ միակ մնացել էր այդ հալված մաշված կմախքի մէջ: Կմախքը գերեզման մտնելուց առաջ յուսահատութեամբ վառնում էր իր բոլոր ողորմելի ոյժերը, որպէս զի կարողանայ իր ոսկորները մէջից դուրս մղել դարդը, ասում էին

որ ոսկորների մէջ է նստած նա. և հարկաւոր է այդ ակամայ պարը, որ նա այնտեղից դուրս չէր համարձակվում: Արեւելում պատուը քաղցը և եղել նոյն իսկ նրա նախամօր համար. չար սատանան երբեմն խառում էր նրան, դուրս էր բերում սահմանած դիրքից: Ամենը զայն թակահարութիւն էր, բայց մայրը անմիջական չէր կշռում, «սասնը չանել» — այդ բաւական էր նրան դատելու, պատժելու համար: Պատիժը ծածկ չէր. «ծածկ էլին կը տան», ասում էր նա և պատժում էր իր աղջկան ծածկ տալու անհամարձակութեամբ: Իսկ խօսքերը, շատ անգամ ամենանամով հայոցանքներ էր թափում՝ նայած թէ որ աստիճան էր բարձր ված նրա սիրտը:

— Զողի բաժին, գոչում էր նա ամեն անգամ. — դարձաւ դու չես, դու կարգիս ինչպէս որ լինի, այնպէս եղիլ, որ քիչ տանող մի անգամ դուն ինձ ողորմի տայ, խեղճ հոգիս հանգիստ թողնէ, ամեն օր փոքր ուղիւրս չը հանէ գերեզմանից ու յիշոց տայ...»

Միշտ մեզ էր լուում Սալբին, ուշ էր հանդարտվում, անհանում աղջկայ այն արարքը, որի համար այդպիսի խօսքեր էր ասում: Ասում էր աղջկայ ճակատին, աչքը գցած նրա աչքին, ուրիշ կերպ չէր թողնում որ նա լսէ իսկ նա ստիճարած էր, նրա ճակատի կային, ինչպէս ինքն էր ասում, հաստացել էր. և լուռ ու մուռ հագալից մի անգամ, յանդիմանութիւնը խեղդելու չափ անտանելի դարձած ժամանակ, աչքերից մի երկու կաթիլ կաթեցնելով լուռ էր մօր խրատները: Եւ մինչև 13 տարեկան դառնալը նա սո-

Սալբինի լուռ մեծացող հայ աղջիկ էր, այսինքն խոնարհ ու համեստ: Նա այդպէս մեծանում էր մօր ձեռքի տակ. իսկ մօր ձեռքն այն-

վորեց, եղաւ մի օրինաւոր աղջիկ: Օրինաւոր մինչև այն աստիճան, որ Սալբին այլ ևս աւելորդ համարեց լուռ մնալ և սկսեց իր աղջկայ գովաւանքները ամեն տեղ տարածել:

Աղջկին ինչ պիտի լինի, որ կօպէկի զին ունենայ: Շատերն ասում են թէ գեղեցիկ պիտի լինի, աչքերն այսպէս, յօնքերն այնպէս, երեսը ոչ մեծ, ոչ փոքր, գոյնը թուր չը լինի, ոչ էլ շատ կարմիր. մաղբը թուր, ծամը հաստ, բերանը փոքր, ծնօտը կոլոր, եւ ինչ իմանամ, հարկը ու մի այսպիսի բաներ: Հողմը այդպէս ասողները դուրսը: Շատ էլ որ գեղեցիկ եղաւ աղջիկը, ինչ պիտի անեն: Նրա երեխ վրա հօ փաւ չեմ ուտելու, որ գեղեցիկ լինի, Լպտամ, սիրուն և իմ քեֆս գայ: Չէ, աղջիկ այն աղջիկն է, որ ունի բաց աչք, որ նստել, վեր կենալ գիտէ, փոր է, դուրսը խեղճով լիքը: Հաւաքել, սըրբել, վերցնել, սաղել, տեղը դնել, մաքուր, խտակ, գեղեցիկ, ամօթը երեսին նստած, աչքը իր տան պուճախին... Զի, աղջիկ, այդպիսի աղջկան եւ մատաղ գնամ: Այդ բաներից եթէ մէկը, մի հատը պակաս է, տար այդպիսի աղջկան չափարի տակ զգիր, որ չունի ոտիցը բաշէ, տանէ: Իմ հոգիս այն աղջկան մատաղ, որի մատները կանաչ են, որը մի չնչին, դատարկ, զէն ընկած բանից մի մարդավարի բան է յիշում, մարդու առաջը դուրս բերում: Այսօր եթէ պատրաստ միս լինի, ամեն մէկը, տղամարդն էլ, կեղակուր կեկիւ, եթէ փայտը դրանք կուտած լինի, իսկի դժուար բան չէ կրակ անելու: Բայց աղջիկ եմ ասում, որ միս չեղած ժամանակն էլ մի հա-

վատ ներգործություն ունենալ երկրի և մանուկ թաղաւորի վրա, կառավարութիւնը վճռեց առաջվայ պայմանները վրա հիմնել, այն է, թաղաւորին, ինչպէս և Միլանը՝ իրանց որդու հետ տեսնելու համար կը գան տարեկան երկու անգամ, և այն էլ թաղաւորը գալուստը կը նշանակվի զեկտեմբերին: Իր այդ որոշումը կառավարութիւնը այսօր հաղորդել է թաղաւորին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 սեպտեմբեր: Բարձրագոյն հրամայում է. Պետերբուրգում կայսրուհի Մարիա ֆեօդովնայի համար արձան կանգնեցնելու նպատակով հանդանակութիւն բանալ՝ կայսրուհու Մարիայի հիմնադրութիւններին վերաբերեալ Նորին կայսրական Մեծութեան զիւանատան մէջ. բարեգործական հիմնադրութիւններ և կայսրուհի Մարիայի տեսչութեան պատկանող զարդակային հիմնադրութիւններ վարչութիւններում, զենեկաւորական հիմնադրութիւններ, նախնական դասերի, քաղաքացիական, չրջանագետների, աշխատանքային պարագլուխների, ոստիկանապետների զիւանադասներում, երկու մայրաքաղաքների, իւրիտի, կիեւի, Օդեսայի և Ելաւայի քաղաքացիների մօտ, և վարչական քաղաքի նախագահի մօտ: «Journal de St. Petersburg»

Իրադրել հերթում է Վիեննայի «Corresp. de l'Est» լրագրին Ռուսաստանից հաղորդած լուրը իբրեւ թէ Ռուսաստանում բացված է մի դատարանութիւն պետական կազմակերպութեան դէմ, և իբրեւ թէ այդ առիթով բացված է ձեռնարկութիւններ և խաղաղութիւններ են լինում կիեւիում, խարկովում և Օդեսայում:

ՐԵՎԵԼ, 14 սեպտեմբեր: Շարլ Լեբուր մարմնը չէ գտնված: Մարմնի ընդհանուր ջրի հետ պէտք է մահացու եղած լինէր: Օղակարգի ջրի երեսին երևաց մի բանի վայրկեան միայն, ապա մարմինը և օղակարգի բազմապէս անհետացան ջրի մէջ:

ՐԵՎԵԼ, 15 սեպտեմբեր: Շարլ Լեբուրի զիւկը գտնվել է ծովի մէջ, երկու սամէն խորութեամբ:

ՕԴԵՍՍ, 15 սեպտեմբեր: Երէկ Օդեսայի տունը է ծովապետ Գերբասի ծննդավայրը: Խաչի-բէ թիւը քաղաքի տեղում, կառուցվել է Օդեսա քաղաքը: 10հոկտ. 15 սեպտեմբեր: Անգլիական բանկը բարձրացրել է իր զիւկեան 40/0-ից մինչև 50/0:

Խմբագիր-հրատարակող Գրիգոր ԱՐՇԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՄԱՍԻՍ

ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԱՔԱԿԱՆ

Հրատարակվում է Կ. Պոլսում ամեն ամիս 1-ին և 15-ին: Տարեկան գինն է ռուսաստանցիների համար 2 ռուբլի: Հասցեն՝ Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան-խան: 1—4

ՄԷԿ ՈՒՍՈՒՑԻՉ ԿԱՄԵՆՈՒՄ Է ՄԱՍՆԱԻՐ ԴԱՍԵՐ ՏԱԼ ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒԻՑ: Յանձն է առնում նոյնպէս և կրկնութիւններ անել զիւնադրական առարկաներից աշակերտների հետ: Ցանկացողները կարող են զինել Գալիանեան օրիորդական դպրոցը, ուսուցիչ Մաթինեանին, առաւօտեան 11—12 ժամը: 1—5

Էջմիածնում հաստատված ցուցակի երկրորդ կարգի ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ ՑԱՆԿԱՆՈՒՄ է հայոց ուսումնարաններում աւագ ուսուցչութեան կամ առհասարակ ուսուցչութեան պաշտօն ունենալ, աւանդելով բացի ուսուցչից, բոլոր առարկաները: Պայմանների մասին զինել՝ ԱՆԷՔՍԱՆ ԶՐՕՎՈՂ Խաչատուր Շաթիրեանցին: 1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅՐԱՆՍՊՈՒԿԱՆ ՆԱԽԱԳԵՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱՍԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ Հինգշաբթի, սեպտեմբերի 28-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգանավոր, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է զինել ընկերութեան գործակալներին. Բաթումում՝ ԼԷՄՈՂՐԵԻ տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում՝ նախկին Արժուէրի գալլերէում, № 114: (Ե.) 1—2

Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեամբ ամիս 17-ին կիրակի օրը, ժամի 12-ին, ս. պատարագից յետոյ կատարվելու է քաղաքի ՆՈՐԱՇԷՆ Սուրբ Աստուածածին եկեղեցու ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ հոգաբարձական ընտրութեան համար պատգամաւորների ընտրութիւն: Նոյն օրը պէտք է կատարվի և երեցփոխանի ընտրութիւնը: Ուստի յիշեալ եկեղեցու մեծապատիւ ծխականները հրաւիրվում են նրանակեալ օրը եկեղեցի՝ մասնակցելու ընտրութեանը: Վերատեսուէ բարեկարգութեան եկեղեցեաց Թիֆլիսի՝ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեան 1—1

Ն Ա Խ Ա Չ Գ Ո Ւ Շ Ա Ց Ո Ւ Մ

Մեր տեղեկութեանը հասաւ, որ ԷՅՆԷՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ արդիւնաբերած այրված կաթէի նշանագրերը (ЯРЛЫКИ) կեղծվում են և որ մայիսի 12-ին ներկայ թւի մեզ աղօղակեց գտնել Թիֆլիսում մի հիմնարկութիւն, որը զբաղված է այդ տեսակի կեղծութիւններով, այնպէս որ դատաստանական իշխանութիւնը կընքէ այրված կաթէի աւելի քան 2,000 մետաղական արկղիկներ, մեր ֆիրմային նմանեցրած այդ տեսակի կեղծ նշանագրերով և գտաւ զարձեւալ 3,000 նոյնանման եւրիկներ:

Չը նայելով այդ հանգամանքին, այդ կաթէի առևտուրը զարձեւալ շարունակվում է և այդ պատճառով մենք ստիպված ենք նախագրողացնել յարգելի հասարակութեան, որ ՄԵՐ եւրիկները տպված են ՄԻԱԿԵՐՊ ՀԱՌԱՍԱՐ ՏԱՌԵՐՈՎ, այն ինչ կեղծված եւրիկների վրա հետեւեալ խօսքերը. «ЯРЛЫКЪ УТВЕРЖДЕНЪ ПРАВИТЕЛЬСТВОМЪ» և դորձածելու եղանակի բացատրութեան տակ ստորագրութիւնը «Товарищество паровой фабрики ЭЙНЕМЪ» աւելացրած են կառուցական զրոյմով:

Շոգեգործարանի ընկերութիւնը ԷՅՆԷՄ Մօսկվայում

4—6 (Ե. 2.)

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ Թ. կարգի (Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտից) կամենում է տեղ ունենալ հայոց ուսումնարաններում: Հասցեն՝ Тифлисъ, Михайловская улица, домъ № 55. 2—3

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկայք սորա են՝ 1) Առևտրական հետեւութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղարդութիւն:

Ուսումը սկսվում է սեպտեմբերի 15-ից, ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլալուում: Աղէքսանդր ֆրիդմանովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նազարնայա փողոցների անկիւնում, զեղատան զիմաց: Ծրագրերը ու կանոնները կարելի է տեսնալ ԶԻՐԱՊԷՍ եղբ. Ծովանոյիների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք զինում են կուրսերի հիմնողին. — въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

16—20 (Ե. Ե.)

ՀԱՅՈՒՆԿԵԼԻԹ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

91-ն Սեպտեմբերի 1889

Պ Ա Հ Ա Ն Ջ Գ	Թիֆլիսում	Բազուրի բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Գ	Թիֆլիսում	Բազուրի բաժն.	Ընդամենը
1. Գրամարկի (առձեռն թղթադրամ).....	59.047—47	68.278—51	127.325—98	1. Հիմնական դրամադրու.....	1.000.000 —	—	1.000.000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	1.044—20	140.000 —	141.044—20	2. Պահեստի դրամադրու.....	165.571—28	—	165.571—28
3. Զեղյուան (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ.	2.695.621—44	878.346—32	3.573.967—76	3. Գրամական աւանդներ՝			
4. Զեղյուան մուրհակաց մէկ ստորագրութեամբ, ապահոված ապրանքներով.	—	—	—	ա) Պայմանաժամով 1.755.573 —	110.527 —	1.866.100 —	
5. Զեղյուան տոկոսաբեր թղթ, կտրօն. և այլն.	34.566—09	5.961 —	40.527—09	բ) Գրամանք..... 195.580 —	28.750 —	224.330 —	
6. Փոխաւորութիւն դրամականով՝				գ) Ընթացիկ հաշուով հասարակ. 635.304—59	552.216—77	1.187.521—36	
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի. 1.090.799—46	294.760 —	1.385.559—46		դ) Ստորագրութեամբ և տոկոսաբեր թղթերով.	203.094—83	203.094—83	
բ) Ստորագրութեամբ և տոկոսաբ. թղթերի. 164.478 —	3.380 —	167.858 —		4. Զեղյուան մուրհակաց պետական բանկայի թիֆլիսի բաժնում.	307.823—75	—	307.823—75
գ) ապրանքների 58.199 —	26.880 —	85.079 —		5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետական բանկայի թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և տոկոսաբեր թղթերով.	608.500 —	—	608.500 —
դ) Ոսկոյ և արծաթի —	500 —	500 —		6. Թղթակիցներ՝			
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր, 421.402—16	24.645—68	446.047—84		ա) Նոցա հաշիւը (Loro)..... 4.612.094—64	—	4.612.094—64	
8. Ոսկի և արծաթաձանթի փոխանակագրեր. 98.132—85	—	98.132—85		բ) Բանկայի հաշիւը (Nostro)..... 5.657.649—21	—	5.657.649—21	
9. Թղթակիցներ՝				7. Բաժնի հաշիւը կենսութեան վարչութիւն. հետ. 660.764—31	660.764—31	660.764—31	
ա) Նոցա հաշիւը (Loro)..... 4.857.577—84	—	4.857.577—84		կենսութեան վարչութիւն. հաշիւը բաժնի հետ. 184.711—88	—	184.711—88	
բ) Բանկայի հաշիւը (Nostro)..... 5.255.675—16	—	5.255.675—16		8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը 82, 83, 84, 85, 86, 87, 88 թ. 3.493—10	—	3.493—10	
10. Բաժնի հաշիւը կենսութեան վարչութեան հետ. 580.670—57	—	580.670—57		9. Չը վճարուած տոկոսներ, աւանդներ, ընթացիկ հաշիւներ և այլ գործողութեանց. 66.132—92	15.450—02	81.582—94	
կենսութեան վարչութեան հաշիւը բաժնի հետ. —	218.173—93	218.173—93		10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ 166.160—64	88.530—58	254.691—22	
11. Բողոքուած մուրհակներ. 7.921—41	—	7.921—41		11. Փոխանցիկ գումարներ. 21.128—74	18.369—22	39.497—96	
12. Պայմանաժամով անցուցուած փոխաւորութիւններ. 10.140—41	—	10.140—41		12. Արդիւնք. —	—	—	
13. Ընթացիկ ծախսեր. 30.648—25	10.293—88	40.942—13					
14. Կահպարախը և սկզբնական ծախսեր. 3.215—36	2.520—39	5.735—75					
15. Յետ ստացուելիք ծախսեր. 10.584—49	1.363—02	11.947—51					
Բ. Ա. 15.379.723—75	1.677.702—73	17.057.426—48					